ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Շահագործողական տիպի պետությունների գոյության ամբողջ ընթացքում պետության և իրավունքի առաջացման, նրանց էության ու հասարակության մեջ խաղացած դերի հարցերը եղել և այսօր էլ մնում են տարբեր հոսանքների ու դպրոցների պատկանող փիլիսոփաների, սոցիոլոգների ու իրավաբանների սուր վեճերի առարկա։ Պետության և իրավունքի մասին տարբեր հոսանքների միջև գաղափարական պայքարի սրումը կապված է պատմական ասպարեզում բանվոր դասակարգի ի հայտ գալու հետ, դասակարգ, որն իր առջև խնդիր դրեց ոչնչացնել շահագործողական տիպի պետությունը և իրավունքը՝ կոմունիստական հասարակարգ կառուցելու համար։ «Պետության հարցը,— գրել է Վ. Ի. Լենինը,— ամենարարդ, ամենադժվար և բուրժուական գիտնականների, գրողների ու փիլիսոփաների կողմից գրեթե ամենից խճճված հարցերից մեկն է»[1]։

Բուրժուական տեսաբանները պետության մասին իրենց հայացքների դասակարգային բնույթը քողարկելու նպատակով ամեն կերպ ձգտում են ապացուցել, որ իրենց գաղափարներն անդասակարգային, անկուսակցական են, չեզոք են և օբյեկտիվ։ «Անկուսակցականությունը,— գրել է Վ. Ի. Լենինը,— բուրժուական հասարակության մեջ լոկ կուշտերի կուսակցությանը, իշխողների կուսակցությանը, շահագործողների կուսակցությանը պատկանելու կեղծավոր, քողարկված պասսիվ արտահայտություն է։

Անկուսակցականությունը բուրժուական գաղափար է։ Կուսակցականությունը սոցիալիստական գաղափար է»[2]։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, մերկացնելով պետության և իրավունքի մասին ժամանակին լայն տարածում ստացած հակագիտական հայացքները, ցույց տվեցին, որ պետությունը լինելով պատմական կատեգորիա, հանդիսանում է հասարակության ներքին զարգացման արդյունք։ Մարքսիզմի կլասիկներն ապացուցեցին, որ պետությունը և իրավունքը առաջացել են հասարակության զարգացման որոշ աստիճանում, մասնավոր սեփականության առաջացման և նրա բազայի վրա հասարակությունը հակամարտ դասակարգերի բաժանվելու հետևանքով։ Պետությունը դասակարգային հակասությունների անհաշտելիության արդյունք է, և այն որպես հարկադրման հատուկ ապարատ առաջացել է այնտեղ ու այն ժամանակ, երբ հանդես է եկել հասարակության դասակարգային բաժանումը։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 578։

2 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 12, էջ 165։

Պետության և իրավունքի մասին մարքս-լենինյան ուսմունքն արմատապես տարբերվում է նախորդ բոլոր ուսմունքներից և նրա ի հայտ գալով հեղաշրջում կատարվեց քաղաքական ուսմունքների պատմության մեջ։ Այդ պատճառով էլ բուրժուական գաղափարախոսները կատաղի պայքար սկսեցին մարքսիզմի դեմ։ Այդ պայքարն ավելի սրվեց բանվորական շարժման զարգացմանը զուգընթաց և իր գագաթնակետին հասավ ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության պարտությունից հետո։

Վ. Ի. Լենինը 1917 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին գրեց իր «Պետություն և հեղափոխություն» հանճարեղ աշխատությունը, որով մի նոր աստիճանի բարձրացրեց պետության մասին մարքսիստական տեսությունը և անարգանքի սյունին գամեց ոչ միայն բուրժուական կատաղի գաղափարախոսներին, այլև հակահեղափոխությանը զինվորագրված մարքսիզմի renegատներին։

Հայաստանում դաշնակցականների տիրապետության ծանր պայմաններում պրոպագանդելով Վ. Ի. Լենինի հայացքները, Արշ. Մելիքյանը գրել է. «Վ. Ի. Լենինը իր աշխատությամբ վերականգնում և զարգացնում է մարքս-էնգելսյան անաղարտ ուսմունքը պետության, հեղափոխության, կոմունիզմի և մի շարք էական այլ հարցերի մասին, որոնց աղավաղել, գռեհկացրել, խեղաթյուրել և ցեխոտել են նրանց մի քանի «աշակերտները» և իբր թե հետևորդները»[3]։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանում գրված Վ. Ի. Լենինի աշխատությունը մարքսիստորեն հաստատեց բուրժուական պետական մեքենայի ջարդման ու փշրման և պրոլետարիատի դիկտատուրայի ստեղծման անհրաժեշտությունն ու օրինաչափությունը։ «Ահա թե ինչու մենք այն համարում ենք երկրորդ «Կապիտալ»,— գրել է Ալ. Մյասնիկյանը։— «Կապիտալ»-ը տվեց մարդկության կապիտալիստական տնտեսության ու կազմի ըմբռնողության բանալին. «Պետություն և հեղափոխություն»-ը մեր առաջ բաց է անում պրոլետարիատի հեղափոխության դռները»[4]։

Անցյալ դարի վերջերից հայերեն լեզվով սկսեցին հրատարակվել մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական ուղղության աշխատություններ[5]։ 1890-ական թվականներին «Մշակ», «Մուրճ» և «Տարազ» լիբերալ ուղղության թերթերում և հանդեսներում հրատարակած իր հոդվածներում Գ. Ղարաջյանը (Ստ. Արկոմեդ) առաջին անգամ հայ իրականության մեջ սկսեց պրոպագանդել պետության առաջացման մասին մարքսիստական դրույթները։ Նա ելնելով Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատության դրույթներից և խոսելով նախնադարյան համայնական հասարակարգի քայքայման մասին, ի հակադրություն ժամանակի կղերաֆեոդալական և լիբերալ-բուրժուական գաղափարախոսության, պարզաբանում էր մարքսիստական այն գրույթները, որ պետության ծագումը կապված է արտադրողական ուժերի զարգացման և մասնավոր սեփականության առաջացման հետ։ «Հասարակության դասակարգերի բաժանման հան-

---

3 «Խոսք», 20. XII. 1918։

4 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 272։

5 Վ. Ա. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, էջ 547։

դամանքն առաջ բերեց պետության գոյության կարիք»[6],— գրել է Գ. Ղարաջյանը։ Այս նոր զարգացող հասարակությունը տնտեսական այնպիսի պայմաններ է ունեցել, նշում էր նա, որոնք հասարակությանը բաժանել են հարուստների և աղքատների և նրանց միջև առաջացել են հակադրություններ։ Այվ ահա աղատների ու ստրուկների միջև առաջացած թշնամանքն առաջ է բերել հարկադրման ապարատի անհրաժեշտություն[7]։

Պետության մասին մարքսիստական տեսակետների լուսաբանման և հայ իրականության մեջ դրանց տարածման կարևոր խնդիրը կատարեցին Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ս. Սպանդարյանը, Ալ. Մյասնիկյանը, Արշ. Մելիրյանը և ուրիշ հայ մարքսիստ-լենինյաններ՝ հայ բոլշևիկյան մամուլի օգնությամբ։ Հայ քաղաքական և իրավական մտքի պատմության առաջացման և զարգացման մեջ ևս հատուկ տեղ են գրավում Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի ստեղծագործությունների հայերեն հրատարակությունները։

Ստեփան Շահումյանն իր «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստ» (1902), «Դասակարդերը ժամանակակից եվրոպական հասարակության մեջ» (1905), «Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ» (1905), «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» (1906), «Կոնստիտուցիոնիզմ թե պառլամենտարիզմ» (1906), «Ռեֆերատ ազգային հարցի մասին» (1912), «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» (1913—1914) աշխատություններում, 1917—1918 թթ. դրած հոդվածներում ու ճառերում քանիցս անդրադարձել է պետության ու իրավունքի հարցերում մարքսիստական տեսության պարզաբանմանը, նրա պրոպագանդմանը։ Ստ. Շահումյանը հայ ընթերցողներին բացատրում էր, որ եթե նախնադարյան համայնական հասարակարգում մարդիկ հավասարապես պայքարել են իրենց գոյությունն ապահովելու համար, ապա հետագայում մասնավոր սեփականության առաջացման և հակամարտ դասակարգերի ձևավորման պատճառով, տնտեսապես ուժեղ դասակարգը ստեղծել է իր քաղաքական տիրապետությունը՝ հակառակորդ դասակարգի դիմադրությունը ճնշելու նպատակով։ «Առավել ուժեղ և կյանքում իշխող դասակարգը,— գրել է Ստ. Շահումյանը,— նյութական կյանքի արտադրական պրոցեսում վերածում է իր կոլեկտիվ կամքը, որը, ինչպես մենք դիտենք, թելադրվում է նրա տնտեսական դրությամբ ու տնտեսական շահերով և հակադիր է այլ դասակարգերի կոլեկտիվ կամքին,— նա իր դասակարգային կամքը վերածում է հասարակական ու պետական հիմնարկությունների մեջ»[8]։ Կոնկրետացնելով իր միտքը պետության առաջացման մասին, Ստ. Շահումյանը գրել է. «այն օրից երբ ...ծնունդ են առնում աշխատանքի բաժանումն ու դասակարգային շերտավորումը... այդ բոլորի շնորհիվ անհրաժեշտորեն սկսվում է պետական կյանքը»[9]։ Ստ. Շահումյանի այս միտքը բխում է Ֆ. Էնգելսի այն հանրահայտ դրույթից, որ աշխատանքի առաջին խոշոր հասարակական բաժա-

6 Գ. Ղարաջյան, Քաղաքակրթության զարգացման ընթացքը («Մուրճ», 1893, № 10, էջ 1539)։

7 Նույն տեղում։

8 Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1975, էջ 126։

9 Նույն տեղում։

նումից առաջացան շահագործողների և շահագործվողների դասակարգերը. հետևաբար, տոհմային կարգին «փոխարինեց պետությունը»[10]։

Պետության առաջացման հարցերին անդրադարձել են նաև Ալ. Մյասնիկյանը, Արշ. Մելիքյանը և հայ մյուս լենինյանները։ Նախնադարյան հասարակարգում, ասել է Ալ. Մյասնիկյանը, կոմունալ ձևով ապրող մարդիկ համատեղ կարգավորել են իրենց արտադրական հարաբերությունները և չեն ունեցել արտոնություններ մեկը մյուսի նկատմամբ։ Սակայն արտադրողական ուժերի զարգացմանը զուգընթաց փոփոխություններ են կատարվել հասարակական կյանքում։ Արտադրության միջոցները և ստեղծված նյութական բարիքների մեծ մասը կենտրոնացել են մարդկանց առանձին խմբի ձեռքում։ Եվ ահա այդ երկարատև պրոցեսում, երբ անընդհատ խորանում են սոցիալական հակասությունները, առաջանում է հարկադրանք կիրառելու անհրաժեշտություն։ «Պետությունը դասակարգային տարբերությունների արդյունք է,— գրել է Ալ. Մյասնիկյանը,— նա այն կենտրոնն է, որը... արտահայտում է դասակարգային հակասությունները։ Պետությունը կարգավորում և օրինականացնում է հասարակության դասակարգային բաժանումները, դասակարգային աշխատանքը»[11]։

Արշ. Մելիքյանը քննադատելով հայ իրականության մեջ պետության մասին հորինված հակագիտական թեզերը, պարզաբանում էր մարքսիզմի տեսակետը այդ հարցում. պետությունը, գրում էր նա, աստծու կամքով ստեղծված, կամ հասարակությանը դրսից պարտադրված ուժ չէ, նրա առաջացումը խոսում է տնտեսապես հզորացած դասակարգի տիրապետությունը նաև քաղաքական իշխանությամբ ամրապնդելու մասին՝ դասակարգային անհամատեղելի հակասությունները բռնությամբ կարգավորելու համար։ «Պետությունը առաջանում է այնտեղ,— նշում էր Արշ. Մելիքյանը,— որտեղ դասակարգային հակասություններն արդեն անհնարին է հաշտեցնել»[12]։

Քաղաքական և իրավական մտքի բնագավառում հայ մարքսիստ-լենինյաններն իրենց գլխավոր խնդիրներից մեկը համարում էին շահագործողական տիպի (հատկապես բուրժուական) պետության դասակարգային էության պարզաբանումը, նրա քննադատությունն ու մերկացումը։ Հայ իրականության մեջ, հատկապես XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին, մարքսիստական քաղաքական և իրավական մտքի տարածումը կանխելու նպատակով հայ բուրժուական գաղափարախոսները, ելնելով իրենց շահերից, խեղաթյուրում կամ քողարկում էին պատմական ճշմարտությունը բուրժուակալվածատիրական տիրապետության վերաբերյալ, բարբառում էին այն մասին, որ ցարական պետական ապարատը հանդիսանում է բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ազգի իղձերի, շահերի ու կամքի արտահայտիչը։

1890-ական թվականներին Գ. Ղարաջյանը հետևողականորեն չպաշտպանեց պետության հարցում մարքսիստական դրույթները։ Այսպես, բուրժուական պետությունների ռեակցիոն էությունը մերկացնելու փոխարեն նա նշում էր, որ իբրև թե եվրոպական բուրժուական պետությունները սկսել են

10 Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1936, էջ 195։

11 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 195։

12 Արշ. Մելիքյան, Վ. Ի. Լենինի «Պետություն և հեղափոխություն» գրքի մասին («Խոսք», 28. XII. 1918)։

հարթեցնել, վերացնել անտագոնիստական դասակարգերի միջև եղած դարավոր հակամարտությունները։ «Ներկայումս,— գրում էր Գ. Ղաղաջյանը 1893 թ.,— Եվրոպական հասարակության մեջ տեղի է ունենում... ընդհարում կապիտալի և աշխատանքի միջև, եվրոպական պետությունը ձգտում է մեղմացնել այդ ընդհարումը և ինքը իրեն կոչված է զգում հաշտեցնել հասարակության մեջ գոյություն ունեցող հակասական տարրերը»[13]։

Տիրող կարգերի բազմակողմանի վերլուծությունը և քննադատությունը, բուրժուական դիկտատուրայի պետության էության բացահայտումը դասակարգային, կուսակցականության դիրքերից վիճակվեց Ստ. Շահումյանին, Բ. Կնունյանցին, Ս. Սպանդարյանին, Ալ. Մյասնիկյանին և մյուս հայ լենինյաններին, որոնք հաստատեցին, որ շահագործողական պետությունը կոչված է ոչ թե «ընդհանուրի բարօրության», «համընդհանուր արդարության», այլ տիրող դասակարգերի շահերի համար, մասնավոր սեփականության պաշտպանության, բանվորների և չքավոր գյուղացիության դիմադրությունը ջախջախելու, նրանց հնազանդության մեջ պահելու համար, որ պետությունը իր առաջացման օրից ոչ թե վերդասակարգային է, այլ դասակարգային իր ամբողջ էությամբ։ «Այսպիսով, պետությունը,— տվյալ դեպքում ամենից շատ մեզ հետաքրքրում է այդ «իրավական վերնաշենքը»,— ընդգծել է Ստ. Շահումյանը,— պատմության մեջ միշտ հանդիսացել է դասակարգային տիրապետության կազմակերպություն»[14]։

Բ. Կնունյանցը 1905 թ. մարտի 31-ին Մոսկվայի դատական պալատի նիստում արտասանած ճառում, քննադատելով ցարական անարդար կարգերը, պետությունն ու պետական ապարատը, ի լուր ամենքի հայտարարեց, որ բուրժուական հասարակարգում, ինչպես պետությունը, այնպես էլ բոլոր օրենքներն ու հիմնարկությունները կրում են դասակարգային բնույթ[15]։ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ Բ. Կնունյանցի այդ ճառը որպես ագիտացիոն կարևոր նյութ հրատարակվեց «Վպերյոդ» թերթի հավելվածում՝ «Դատ դատարանի դեմ» վերնագրով։

Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և Ալ. Մյասնիկյանը բուրժուական հասարակարգի տնտեսական գործունեության վերլուծության միջոցով ցույց են տվել, թե ինչպիսի մեթոդներով ու ձևերով են բուրժուական պետությունները աշխատավորության դիմադրությունը ճնշելու հետ միասին պայքարում մասնավոր սեփականության պաշտպանության համար։ Բուրժուական պետական ապարատը պայմաններ է ստեղծում կապիտալիստների օգտին հավելյալ արժեքի տոկոսը բարձրացնելու համար։ «Ամեն տեղ պետական մարմինները, ամբողջ օրենսդրությունը, բոլոր հասարակական-իրավական հիմնարկությունները,— գրել է Ստ. Շահումյանը 1907 թ.,— ծառայում են բուրժուազիայի ձեռքին իբրև զենք՝ նվիրագործելու մասնավոր սեփականության «սրբազան» ու «անձեռնմխելի» իրավունքը, ամրացնելու և հավերժացնելու կապիտալիստական շահագործության հրեշավոր հիմունքները»[16]։

---

13 «Մուրճ», 1893, № 10, էջ 1539։

14 Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 126։

15 Б. М. Кнунянц, Избранные произведения, Ереван, 1958, էջ 73։

16 Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 72։

Ալ. Մյասնիկյանը 1907 թ. հանդես դալով Նոր Նախիջևանում լույս տեսնող «Նոր կյանք» շաբաթաթերթում, խիստ քննադատեց Վ. Զուբարյանին, որը բուրժուական պետության մարմինները համարում էր հասարակության բոլոր անդամների սեփականությունը և գտնում էր, որ ոչ միայն պետական ապարատը, այլև դպրոցները, դիրն ու դրականությունը վերդասակարգային են։ Բուրժուազիան, ընդգծում էր Ալ. Մյասնիկյանը, անկուսակցական դիմակի տակ իրականացնում է իր դասակարգային-կուսակցական քաղաքականությունը։ Երկրի իրավաբանական նորմերը հաստատող քաղաքական կարգը, գրում էր նա, հանդիսանում է բուրժուական, որովհետև կառավարման ղեկը գտնվում է տիրապետող այդ դասակարգի ձեռքին[17]։ Իշխանության բոլոր մարմինները՝ պառլամենտը, դատարանը, բանակը և այլն, ինչպես նաև դպրոցը բուրժուական են, նշում էր Ալ. Մյասնիկյանը։ Այստեղից էլ, տիրող դասակարգի դիկտատուրան որպես քաղաքական իշխանություն, մի կողմից իրականացնում է հարկադրանք հակառակորդ դասակարգի նկատմամբ, իսկ մյուս կողմից, պետականորեն ղեկավարում է հասարակությանը՝ հանուն տիրապետող դասակարգի[18]։

Այսպիսով, զինված մարքս-լենինյան տեսությամբ՝ հայ լենինյանները մերկացնում էին բուրժուական տեսաբանների այն վարդապետությունը, որ իբրև թե կապիտալիստական պետությունները «բարձր են կանգնած բոլոր դասակարգերից և կոչված են պաշտպանելու արդարության սկզբունքը դասակարգերի փոխադարձ հարաբերությունների մեջ»[19]։ Մասսաների առաջ նրանք բացահայտում էին այդ աչքակապության և խաբեբայության էությունը։

Ինչպես հայտնի է, բուրժուական գաղափարախոսներն իրենց պետության դասակարգային բնույթը ժխտելուց բացի՝ առաջ են քաշել և այսօր էլ պաշտպանում են պետության և իրավունքի հավիտենականության թեզը։ Հայ մարքսիստները և բոլշևիկյան մամուլը 1902 թ. սկսած ոչնչացնող քննադատության են ենթարկել նաև բուրժուական այս գաղափարախոսությունը։ Ելնելով պատմական մատերիալիզմի դրույթներից, նրանք ցույց էին տալիս, որ պետությունը և իրավունքը պատմական կատեգորիա են, որ ինչպես ժամանակին ոչնչացվեցին ստրկատիրական և ֆեոդալական պետությունները, այնպես էլ օրինաչափորեն կոչնչացվեն բուրժուական պետությունները։ Տարբերությունը միայն այն է, որ բուրժուական պետությունը խորտակվում է սոցիալիստական հեղափոխության միջոցով՝ սոցիալիստական պետություն ստեղծելու և անդասակարգ հասարակություն կառուցելու համար։

Բուրժուական սոցիոլոգների բանակը լայնորեն պրոպագանդել է և այժմ էլ շարունակում է բարբաջել այն մասին, որ իբր թե բուրժուական կարգերի օրոք մարդիկ դարձան իրենց իրավունքի տերը, որ ֆրանսիական բուրժուական հեղափոխության լոզունգները «եղբայրության», «հավասարության», «ազատության» մասին հանդիսանում են բուրժուական պետությունների գործունեության սկզբունքը։ Հայ լենինյանների բազմաթիվ հոդվածներում ու ելույթներում բացահայտվեց բուրժուական գաղափարախոսների նաև այդ

---

[17] А. Ф. Мясникян (Мясников), Избранные произведения, Ереван, 1965, էջ 20։

[18] Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 196։

[19] Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 77։

պնդման սնանկությունը։ Հայ մարքսիստները ցույց տվեցին, որ բուրժուական պետության բռնության ու կամայականության պայմաններում ազատություն և հավասարություն չի կարող լինել։ Ազատությունը և արտոնությունը կապիտալիստական հասարակարգում միայն բուրժուաների սեփականությունն է։ Ստ. Շահումյանը 1902 թ. գրում էր, թե մի երկրում, որտեղ չկա քաղաքական ազատություն, չկա ազատ խոսք, մամուլ, որտեղ օրենքի տեղ բռնությունն ու կամայականությունն են տիրում, այնտեղ ազատությունն այն շինությունն է, որը կառուցվում է ավազի վրա[20]։

Բացահայտելով ցարական պետության հակաժողովրդական, ռեակցիոն էությունը, Ս. Սպանդարյանը գրում էր, թե քաղաքական նման կարգի հետևանքով Ռուսաստանում ստեղծվել է «գերեզմանային կարգ, վարչական կատարյալ կամայականության, բանտերի, մահվան պատիժների, կախաղանների կարգ և այդ ամենը կազմում է այն ռեալ բազան, որի վրա հիմնված է ցարիզմի ամբողջ իշխանությունը[21]։

Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և մյուս հայ լենինյանների մտքերը բուրժուական պետությունների մասին այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակությունը, որովհետև ներկա էտապում իմպերիալիստական պետություններն իրենց բնույթով մնալով նույնը, ավելի են կատարելագործել բռնություն իրականացնելու ձևերն ու մեթոդները։

Հայ մարքսիստները թեև հատուկ հոդվածներ չեն նվիրել շահագործողական պետությունների ֆունկցիաների վերլուծությանն ու քննադատությանը, այնուամենայնիվ, նրանց քաղաքական և իրավական հայացքների շարադրանքից երևում է, որ Ստ. Շահումյանը, Ալ. Մյասնիկյանը և մյուսները բուրժուական պետությունների ներքին ֆունկցիան բաժանել են երկու մասի, առաջին՝ աշխատավոր մասսաների դիմադրության ճնշում՝ կապված պրոլետարական հեղափոխական շարժումները կանխելու հետ, և երկրորդ՝ մասնավոր սեփականության ըստ ամենայնի պաշտպանություն՝ աշխատավորությանը տնտեսապես շահագործելու միջոցով կապիտալի կուտակումն ավելացնելու համար։

Հայ մարքսիստներն ուսումնասիրելով բուրժուական պետությունների արտաքին քաղաքականությունը, ցույց են տվել նրա ռեակցիոն, զավթողական նպատակները՝ արտաքին շուկայում հրամանատարական բարձունքներ գրավելու և հումքի նոր աղբյուրներ բռնագրավելու համար։ Ինչպես բոլոր հարցերում, այս խնդրում ևս նրանց համար ղեկավար ուղեցույց էին Վ. Ի. Լենինի աշխատություններն ու հոդվածները։ «Պետությունների անխուսափելի մրցումը... շուկայում, —գրել է Ստ. Շահումյանը,— մի կողմից, և ազգային արդյունաբերության համար ավելի ընդարձակ ներքին շուկա ապահովելու ձգտումը, մյուս կողմից, անհրաժեշտ դարձրին առանձին պետությունների սահմանների ընդլայնումը»[22]։ Այս նույն հարցին անդրադառնալով Ս. Կասյանը գրում էր, որ իմպերիալիզմի ժամանակ կապիտալիստական պետություններն ահաբեկման վարչամիջոցներով ձգտում են ամրացնել երկրի ներքին վիճակը՝ ոչ միայն հնարավոր հեղափոխությունները կանխելու,

---

20 Նույն տեղում։

21 Ս. Սպանդարյան, Երկեր, հ. 1, Երևան, 1955, էջ 22։

22 Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 247։

այլև արտաքին աշխարհ դուրս գալու նպատակով ազատ ձեռքեր ունենալու համար։ Բուրժուական պետությունը դառնում է «իմպերիալիստական պետություն. այսինքն այնպիսի պետություն, որը կապիտալիստների օգուտը բազմապատկելու, կեղեքումն ընդլայնելու համար ձգտում է ընդարձակել յուր տերիտորիան, նվաճել նոր երկրներ, տիրանալ նոր ժողովուրդների վրա»[23],— գրել է Ս. Կասյանը։

Հանրահայտ է, որ սոցիալիստական հասարակարգի համար մղվող պայքարը հետապնդում է ոչ թե ընդհանրապես պետության վերացման, այլ բուրժուական պետության ոչնչացման և պրոլետարիատի դիկտատուրայի ստեղծման նպատակ։ Այս տեսակետից հետաքրքրական է հայ լենինյանների պայքարը անարխիստական գաղափարախոսության դեմ, որը ժխտում էր ոչ միայն պետության, այլ նաև պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը։ Անարխիստների այս քարոզը վնասում էր սոցիալիստական գիտակցությունը բանվորական շարժմանը միացնելու գործին, հանգամանք, որով և պայմանավորվում էր նրա դեմ պայքարի անհրաժեշտությունը։ Անարխիզմի դեմ լենինյան պայքարի մարտական դիրքերում էին նաև հայ բոլշևիկները։ Մարքս-լենինյան դրույթներին համապատասխան՝ նրանք մատնանշում էին, որ հասարակության զարգացման ներկա ժամանակաշրջանը, կյանքը իր բոլոր կողմերով դեռևս չի հասել այն մակարդակին, որպեսզի առանց պետության և իրավունքի կարգավորվեն մարդկային փոխհարաբերությունները։ Քննադատելով անարխիստներին, Ստ. Շահումյանը գրում էր. «Միայն մանկամիտ անարխիստներն են, որ կարծում են, թե ավելորդ է պետությունը... ավելորդ են ամեն տեսակ օրենքները, իրավունքները և այլն»[24]։ Բ. Կնունյանցը 1905 թ. հեղափոխական գոտեմարտերի ժամանակ հանդիսանալով Պետերբուրգի բանվորների դեպուտատների սովետի գործկոմի քարտուղարը, ակտիվ պայքար էր կազմակերպել անարխիստների դեմ, որոնք ձգտում էին վնասել հեղափոխական դեմոկրատական դիկտատուրայի համար բանվորների մղած պայքարին։ «Անարխիստների հարցում սովետը (Պետերբուրգի—Հ. Հ.) կանգնած էր միջազգային սոցիալ-դեմոկրատիայի հայեցակետի վրա, որ ամբողջ աշխարհում պայքար է մղվում անարխիստների բոլոր տարատեսակների դեմ»[25],— գրել է Բ. Կնունյանցը։ Անարխիստների մասին Պետերբուրգի սովետի ընդունած որոշման մասին Վ. Ի. Լենինը գրել է. «Մենք գործադիր կոմիտեի որոշումը համարում ենք մի վերին աստիճանի ճիշտ քայլ, որը թե՛ սկզբունքային, և թե՛ գործնական-քաղաքական հսկայական նշանակություն ունի»[26]։

Պրոլետարիատի դիկտատուրայի տեսության դեմ անարխիստների պայքարը իր գագաթնակետին հասավ Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին և հեղափոխության հաղթանակից հետո։ Այդ ժամանակ ևս հայ մարքսիստներն ակտիվ պայքար էին մղում անարխիզմի դեմ, հայ իրականության մեջ պաշտպանելով ու տարածելով լենինյան դրույթները։ Հանրահայտ է, օրինակ, ճանաչված մարքսիստ-լենինյան Արշ. Մելիքյանի պայքարը անարխիստական գաղափարախոսության դեմ՝ Հայաստանում սովետական իշխա-

23 Ս. Կասյան, Ընտիր երկեր, Երևան, 1957. էջ 124։
24 Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 22։
25 Б. М. Кнунянц, Избранные произведения, էջ 308։
26 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 12, էջ 154։

նության հաստատման համար մղված պայքարի ժամանակաշրջանում։ Նա մասնավորապես նշել է, որ անարխիստները, կողմնակից լինելով բուրժուական պետության ոչնչացմանը, միաժամանակ թշնամական դիրքերից են հանդես գալիս Ռուսաստանի նորաստեղծ սովետական պետության դեմ։ «Անարխիստների սխալը կայանում է այն բանում, որ նրանք կամենում են հանկարծ, մեկ հարվածով ոչնչացնել պետությունը, առանց նախօրոք ոչնչացնելու այն սոցիալական պայմանները, որոնց արդասիքն է նա»[27]։ Խոսելով մարքսիստների և անարխիստների հայացքների արմատական տարբերության և հակադրության մասին, Արշ. Մելիքյանը նշում էր, թե մարքսիստները ձգտում են հասնել պետության մահացմանը, որովհետև պրոլետարիատին պետությունը պետք է միայն ժամանակավորապես։ Անարխիստները, ընդհակառակն, դեմ են առհասարակ պետությանը։ Եթե մարքսիստները պետական հին մեքենայի ջարդումը համարում են անհրաժեշտ պրոլետարիատի քաղաքական իշխանությունը հաստատելու և նոր պետական ապարատ ստեղծելու համար, ապա անարխիստները, կողմնակից լինելով բուրժուական պետական մեքենայի ոչնչացման գաղափարին, չեն պատկերացնում, թե ինչով պիտի պրոլետարիատը փոխարինի այն և ինչպես իրականացնի իր հեղափոխական իշխանությունը։ Արշ. Մելիքյանը հենվում էր Վ. Ի. Լենինի այն թեզի վրա, ըստ որի «մեր ու անարխիստների միջև ամենևին տարաձայնություն չկա պետության վերացման հարցի մասին»[28]։ Տարաձայնությունը և հակադրությունը պրոլետարիատի կողմից դիկտատուրայի օգտագործման հարցի մասին է։ Պետության վերացման «նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ժամանակավորապես օգտվել պետական իշխանության գործիքներից, միջոցներից, գործելակերպից՝ ընդդեմ շահագործողների»[29]։

Ինչպես հայտնի է, բանվոր դասակարգի պայքարը կանխելու նպատակով ռևիզիոնիզմն ու ռեֆորմիզմը լայն ճակատով հարձակվեցին մարքսիզմի հեղափոխական տեսության վրա, պնդելով, թե իբր պրոլետարիատը սոցիալիզմի կհասնի խաղաղ ճանապարհով, ռեֆորմների միջոցով, պետական ապարատը կատարելագործելու օգնությամբ։ Հայ լենինյաններն ամենայն վճռականությամբ հանդես եկան նաև այս տեսակետի դեմ, գտնելով, որ բանվոր դասակարգը քաղաքական իշխանությունը կարող է գրավել միայն սոցիալիստական հեղափոխության միջոցով։ «Այդ գաղափարի իրականացմանը չի կարելի հասնել, մեր կարծիքով,— ասված էր 1902 թ. գրված «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստ»-ում,— ո՛չ բանվորական դասակարգի տնտեսական ինքնագործունեությամբ, և ո՛չ մասնակի սոցիալական ու քաղաքական ռեֆորմների միջոցով, այլ լոկ արմատական հեղաշրջման—սոցիալական հեղափոխության միջոցով, որի անհրաժեշտ նախաբանը պետք է լինի պրոլետարիատի քաղաքական իշխանություն ձեռք բերելը»[30]։

Մարքսիստական-լենինյան գաղափարների պաշտպանության և տարածման համար Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի և Ալ. Մյասնիկյանի մղած պայքարը դուրս էր գալիս հայ իրականության սահմաններից և ստանում համառուսական նշանակություն, որովհետև հայ մարքսիստներն

---

27 «Խոսք», 4. I. 1919։

28 Վ. Ի. Լենին, Պետություն և հեղափոխություն, Երևան, 1967, էջ 78։

29 Նույն տեղում։

30 Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 46—47։

իրենց քաղաքական և իրավական հայացքները շարադրում էին ոչ միայն հայերեն, այլ նաև ռուսերեն, գործում էին ոչ միայն հայ իրականության մեջ, այլև նրանից դուրս։ Նրանք քաջ գիտակցում էին, որ սոցիալիստական հեղափոխության հաղթանակի գրավականը Ռուսաստանի բոլոր ժողովուրդների միասնական, ինտերնացիոնալ պայքարի մեջ է։ Նրանք իրենց սրբազան խնդիրն էին համարում ամենուրեք բարձրացնել հայ աշխատավորության սոցիալիստական գիտակցությունը, և ռուս, ուկրաինացի, վրացի, ադրբեջանցի ու մյուս ժողովուրդների հետ նրանց «մասնակից անել համառուսական շարժմանը, միապետությունը տապալելու համար»[31]։ Այդ պատճառով էլ հայ մարքսիստները գործում էին համառուսաստանյան բոլշևիկյան կուսակցության անունից, հանուն նրա առջև դրված մեծագույն հեղափոխական խնդիրների իրականացման։ 1906 թ. սեպտեմբերի 29-ին Պետերբուրգի դատական պալատում, պաշտպանելով և պրոպագանդելով սոցիալիստական հեղափոխության մարքս-լենինյան տեսությունը, Բ. Կնունյանցը հայտարարեց, թե ՌՍԴԲԿ-ն գտնում է, որ միապետության տապալման և սոցիալիստական հասարակարգի կառուցման գլխավոր պայքարը զինված ապստամբությունն է[32]։

Կատարելով Վ. Ի. Լենինի ցուցումները, Ատ. Շահումյանը, Ալ. Մյասնիկյանը, Ս. Կասյանը, Արշ. Մելիքյանը և ուրիշներ վրացի և ադրբեջանցի մարքս-լենինյանների հետ 1914—1917 թթ. Անդրկովկասի ողջ աշխատավորությանը կոչ էին անում իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիականի, բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը՝ սոցիալիստականի և հաստատել պրոլետարիատի դիկտատուրա։

Հայ բոլշևիկները պատկանում էին այն մարքսիստների թվին, որոնք, ինչպես ասել է Վ. Ի. Լենինը, դասակարգային պայքարի ընդունումը հասցնում էին պրոլետարիատի դիկտատուրայի ճանաչմանը[33]։ Հենց այդ դիրքերից էլ նրանք 1902 թ. իրենց մանիֆեստում ոչ միայն արձանագրեցին պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, այլև վճռականորեն պայքարեցին պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը ժխտող բոլոր հակամարքսիստական հոսանքների դեմ։ Այս տեսակետից հայտնի է Ատ. Շահումյանի պայքարը գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության օպորտունիստական թևի դեմ, «որը մերժում է մարքսիզմի հեղափոխական թեորիան և հեղափոխական տակտիկան... սոցիալիստական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի փոխարեն քարոզում է ռեֆորմներ»[34]։

Ատ. Շահումյանը խոսելով պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտության մասին, նշում էր, որ սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո տապալված բուրժուազիան ավելի ուժեղ է մնում, քան հաղթանակած պրոլետարիատը, ուստի պրոլետարիատի դիկտատուրայի հաստատմամբ միայն բանվոր դասակարգը, չքավոր գյուղացիության հետ դաշնակցած, կարող է իրականացնել հասարակության սոցիալիստական վերափոխումները։ «Սոցիալիզմին անցնելու համար անհրաժեշտ է պրոլետարիատի դիկտատու-

---

31 Ատ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 47։

32 М. М. Глазунов, Б. А. Митрофанов, Судебный процесс над первым Петербургским Советом рабочих депутатов («Советское государство и право». 1975, № 12, էջ 18)։

33 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 531։

34 Ատ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 82։

բայի մի նորարատև [illegible][35],— գրել է Ստ. Շահումյանը։ Լենինյան այս դրույթի պաշտպանությամբ հանդես են եկել նաև Ալ. Մյասնիկյանը, Արշ. Մելիքյանը և մյուս հայ լենինյանները։

Այսպիսով, Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ս. Սպանդարյանը, Ալ. Մյասնիկյանը, Արշ. Մելիքյանը և մյուս հայ լենինյանները մարքս-լենինյան տեսության մյուս դրույթների հետ միասին պաշտպանել և հայ իրականության մեջ տարածել են նաև պետության վերաբերյալ լենինյան հայացքները։ Նրանց պրակտիկ և գաղափարական գործունեությունը նշանակալից մի ավանդ էր համառուսաստանյան ընդհանուր հեղափոխական գործում։

РАСПРОСТРАНЕНИЕ МАРКСИСТСКО-ЛЕНИНСКИХ ИДЕЙ О ГОСУДАРСТВЕ В АРМЯНСКОЙ ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ

ОГАНЕС ОВСЕПЯН

Резюме

Верные ученики и соратники В. И. Ленина — Ст. Шаумян, Б. Кнунянц, С. Спандарян, Ал. Мясникян и другие явились распространителями в армянской действительности марксистско-ленинских идей о государстве. Они резко выступали против апологетов буржуазного государства, громили их «теории» о надклассовости, гуманности, демократичности буржуазного строя, о стирании при нем классовых противоречий и пр.

Марксист лишь тот, писал В. И. Ленин, который признает борьбу классов до признания диктатуры пролетариата. Именно с этих ленинских позиций подходили к вопросу диктатуры пролетариата армянские ленинцы и боролись за установление государства диктатуры пролетариата для построения социализма.

---

35 Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1958, էջ 112։